

ՍԱՂՄՈՍ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տիրոջ Օծյալի տիրակալությունը	Մեսիայի հաղթանակը և Թագավորությունը	Տերը տիեզերական իշխանություն է տալիս Իր Թագավորին (Թագավորական Սաղմոս, հորինված թագադրման համար)	Աստծո ընտրյալ Թագավորը	Մեսիական ներկայացում
2:1-3	2:1-3	2:1-3	2:1-3	2:1-3
2:4-6	2:4-6	2:4-6	2:4-6	2:4-6
2:7-9	2:7-9	2:7-9	2:7-9	2:7-9
2:10-12	2:10-12	2:10-12բ 2:12գ	2:10-12	2:10-12

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը ՆԿ-ում ընդունված է որպես Մեսիական (տես՝ Եբր. 1:5, 5:5, այսինքն՝ որ— դի, տես՝ Սաղմ. 2:7): Այն կիրառվում է՝

ա. Պետրոսի կողմից Գործք 4:25-ում

բ. Պողոսի կողմից Գործք 13:33-ում

Արդյո՞ք սա Հիսուսին է վերաբերում, թե ոչ, խնդիրը 7-ում համարում է: Տե՛ս ամբողջական գրառումը. «այսօր Ես Քեզ ծնեցի» արտահայտության վերլուծության մեջ:

Բ. Մեսիական թագավորությունը լինելու է տիեզերական (սա մոնոթեիզմի՝ միաստվածության, ակնհայտ եզրահանգում է՝ տես [Հատուկ Թեմա. Միաստվածություն](#), տես՝ Սաղմ. 2:8, Հայտն . 12:5, 19:5, տես Հայտնության գրքի իմ մեկնաբանությունը www.freebiblecommentary.org):

Գ. «Ազգերի» կողմից հակառակություն է լինելու (տես՝ Սաղմ. 2:1-3): Շատ մեկնաբաններ սա կապում են վերջին ժամանակների ռազմական բախումների հետ (այսինքն՝ նախահազարամյան) այն մարդկանց, որոնք ճանաչում են ՅԱՀՎԵԻՆ և Նրա Մեսիային, և նրանց, որոնք չեն ճանաչում: Սա Ծննդ. 3:15-ում տրված խոստման և Հայտնություն 21-22-ի նոր երկնքի և նոր երկրի խոստման իրականացումն է: Դրանց միջև ընկած ամեն ինչը ապստամբության ահավոր փակագծեր են, որոնք չեղյալ են համարում՝ ավիրում են Աստծո հաղորդակցության ծրագիրը Իր գլուխգործոցի հետ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27, 3:8):

Դ. Հնարավոր է գան բախումներ, սակայն ՅԱՀՎԵՆ ունի փրկագործության հավիտենական ծրագիր, որի մեջ ներառված է Իր Մեսիան:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ընթերցողներիդ պետք է խոստովանեմ, որ այս հարցում ես կողմնակալ եմ: Իմ համակարգված աստվածաբանությունը Կալվինիզմը կամ անջատողականությունը չէ, այլ Մեծ Պատվիրանը ավետարանելը (տես՝ Սատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության համար փրկագործության ծրագիր ունի (օր.՝ Ծննդ. 3:15, 12:3, Ելից 19:5-6, Երեմ. 31:31-34, Եզեկիել 18, 36:22-39, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29, Հռոմ. 3:9-18, 19-20, 21-31), բոլոր նրանց համար, ովքեր ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27): Ուխտերը Բրիտանում միավորված են (տես՝ Գաղ. 3:28-29, Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է՝ առեղծվածը, որ թաքնված էր, սակայն այժմ հայտնված (տես՝ Եփես. 2:11-3:13): Սուրբ Գրքի բանալին հանդիսանում է ՆԿ-յան ավետարանը, և ոչ թե Իսրայելը:

Նախնական այս հասկացությունները իմաստավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Բոլոր տեքստերը ես կարդում եմ այդ լույսի ներքո: Իհարկե դա կողմնակալություն՝ հակվածություն է (բոլոր մեկնաբաններն էլ դա ունեն), սակայն դա Սուրբ Գրքի միջոցով ինֆորմացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2 կենտրոնացումը հանդիսանում է ՅԱՀՎԵԻ կողմից մի վայրի արարումը, որտեղ Նա և Իր մեծագույն արարչագործությունը՝ մարդը, կարող են հաղորդակցվել (տես՝ Ծննդ. 1:26, 27, 3:8): Ֆիզիկական արարչագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Մբ. Օգոստինոսը այն բնութագրում է որպես Աստծո կողմից յուրաքանչյուր մարդու մեջ դրած դատարկություն՝ խռոչ, որը միայն հենց Աստված Ինքը կարող է լցնել:
2. Ս. Ս. Լյուիսը այս մոլորակը կոչում է «ձեռք տրված մոլորակ» (այսինքն՝ մարդկության համար Աստծո կողմից պատրաստված):

ՀԿ-ը ունի շատ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵԻ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդ՝ Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ուշադրություն դարձրեք Ծննդ. 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օրինաց 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի առաջնորդի Իր ընտրյալ ժողովրդին: Նկատեք, որ Ելից 19:5-6-ում ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա բացառիկ փոխհարաբերություն Իսրայելի հետ: Ինչպես նաև նկատեք, որ նրանք ընտրված էին, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ

երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է ՅԱՀՎԵԻՆ ճանաչելու և Նրան հանեցնելու համար ազգերի համար մեխանիզմ լինի: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):

4. Սաղմոսներում՝ 22:27-28, 66:4, 86: 9 (Հայտ. 15:4)

5. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել տիեզերական փրկագործության Իր ծրագրերը:

ա. Եսայի 2: 2-4, 12: 4-5, 25:6-9, 42:6,10-12, 45:22, 49:5-6, 51:4-5, 56:6-8, 60:1-3, 66:18,23

բ. Երեմիա - 3:17, 4:2, 16:19

գ. Միքիա 4:1-3

դ. Մաղաքիա 1:11

Տիեզերական այս շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36), (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵՆ ողորմության վրա, (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՆ /ՀԿ/ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ), այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ): Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր հոգի»: Հնազանդությունը կարևոր է, սակայն դա ներքին օրենք է, և ոչ միայն արտաքին (տես Հռոմ. 3: 21-31, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՀԵԼ):

ՆԿ-ը հստակ ամրապնդում է տիեզերական փրկագործության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանի՝ Մատթ.28:18-20, Ղուկ.24:46-47, Գործք 1:8

2. Աստծո հավիտենական ծրագրի (այսինքն՝ նախասահմանության)՝ Ղուկ.22:22, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29

3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն՝ Հովհ.3:16, 4:42, Գործք 10:34-35, 1 Տիմ.2: 4-6, Տիտոս 2:11, 2 Պետ.3: 9, 1 Հովհ.2: 2, 4:14

4. Քրիստոսը միավորում է ՀԿ և ՆԿ՝ Գաղ. 3: 28-29, Եփ. 2:11-3:13, Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված էր, բայց հիմա հայտնված է (Եփ.2:11-3:13):

ՆԿ-ը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կարևորը և ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը՝ վերջինը (տես՝ Մատթ. 5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու՝

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒՐ ԵՆ ՀԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅԴՔԱՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ
ՆԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԼ ԿԱՄ ՎՍՏԱՀԵԼ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԸՆԴՈՒՆԵԼ», «ՀԱՎԱՏԱԼ», «ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԴԱՎԱՆԵԼ», «ԿԱՆՉԵԼ»:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 2:1-3

¹Ինչո՞ւ են հեթանոսները մոլեգնում,

Իսկ ժողովուրդները դատարկ բան մտածում,

²Երկրի թագավորները ոտքի կանգնեցին,

Ու իշխանները միատեղ խորհրդակցեցին

ՏԻՐՈՋ դեմ ու նրա Օծյալի դեմ ասելով.

³«Կոտրենք նրանց շղթաները

Ու թոթափենք մեզնից նրանց կապանքները»:

2:1-3 Սա նկարագրում է մարդկային անկում ապրած հոգու անկախությունը (հտկա՝ Սաղմ. 2:3, Ծննդոց 3): Ազգերը Աստծո կերպն էր պաշտպանելու մարդկանց մեկ-աշխարհի կառավարման համակարգից (տես՝ Ծննդոց 10-11, 2 Թեսաղոնեիկեցիս 2): Սակայն մի օր աշխարհը միավորվելու է Աստծո Մեսիայի իշխանության ներքո: Եկեղեցու համար սա Բարեկրոնի Աշտարակի հակադարձումն է, որը տեղի ունեցավ Պենտեկոստեի օրը (տես՝ Գործք 2, այսինքն՝ «նրանք բոլորը լսեցին ավետարանի բարի լուրը իրենց սեփական լեզվով»):

2:1 AB-ն (էջ՝ 6) թարգմանում է այս համարը որպես՝ «Ինչո՞ւ են ազգերը հավաքվում, և ժողովուրդները գումարում իրենց գորքերը»: Այս թարգմանությունը հիմնված է՝

1. գուգորդության
2. Ուգարիտիկ բառային կիրառության վրա
3. առաջին ԲԱՅԸ («մոլեզնել», BDB 921, KB 1189, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ՀԿ-ում կարելի է գտնել միայն այստեղ
4. 𐤀𐤃 (BDB 937) «դատարկ բան» արմատի կիրառությունը Ծննդ. 14:14-ում թարգմանված է LXX-ի կողմից

Այն կարծես թե 2-րդ համարին ավելի հարմար համագոր է:

2:2 «թագավորներ ... իշխաններ» Համագոր են համարներն են Դատ. 5:3, Առակ. 8:1 (բանաստեղծական):

❖ **«երկրի»** «Երկիր» տերմինը ունի ընդարձակ նշանակության դաշտ: Համատեքստը պետք է որոշի, թե արդյոք այն տեղանքի, տարածաշրջանի թե գլոբալ առումով է գրված: Հարցն այստեղ այն է, թե «Արդյո՞ք այս Սաղմոսը սկզբնապես վերաբերել է Իսրայելին շրջապատող ազգերին, ՀՄԱ /Հնագույն Մերձավոր Արևելքի/ ազգերին, թե՞ բոլոր ազգերին» (տես՝ Սաղմ. 2:8): Ինչ-որ առումով սա կարող է լինել բազմաբովանդակ մարգարեություն՝ ինչպես օրինակ Սաղմ. 7:14 է կամ տիպաբանություն՝ ինչպես Սաղմոս 22-ը: ՆԿ-ում այս Սաղմոսի կիրառության լույսի ներքո, այն ունի տիեզերական իմաստ (այսինքն՝ Մեսիական, վախճանաբանական, գլոբալ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԳ (erets)

SPECIAL TOPIC: LAND, COUNTRY, EARTH (erets)

Բոլոր եբրայերեն արմատների պես, համատեքստը կարևոր է բնագրի հեղինակի կողմից նրանց մտադրված նշանակությունը որոշելու համար: Եբրայերեն արմատների սահմանափակ թվաքանակը (այսինքն՝ հնագույն Մեմական լեզուն) պատճառ է հանդիսանում, որ նրանցից յուրաքանչյուրը գործի տարբեր իմաստներով: Այս արմատը (BDB 75, KB 90) կարող է նշանակել՝

1. ամբողջ մոլորակը (չնայած որ հնում մարդիկ չէին պատկերացնում դրա չափերը և տեսքը: Սովորաբար այն կիրառվում էր «հայտնի աշխարհի» համար)
 - ա. Ծննդոց 1-2, 6-9, 10:32, 11:1, 4, 8, 9, 14:19, 18:18, 25, 22:18, և այլն
 - բ. Ելից 9:29, 19:5
 - գ. Սաղմոս 8:1, 9, 24:1, 47:2, 7, Երեմ. 25:26, 29, 30
 - դ. Առակաց 8:31
 - ե. Եսայի 2:19, 21, 6:3, 11:4, 9, 12, 12:5
2. երկիրը հակադրված երկնքի հետ՝
 - ա. Ծննդոց 1:2
 - բ. Ելից 20:4
 - գ. 2 Օրինաց 5:8, 30:19
 - դ. Եսայի 37:16
3. մոլորակի մարդ բնակիչների համար որպես փոխաբերություն՝
 - ա. Ծննդոց 6:11, 11:1
 - բ. 3 Թագավորաց 2:2, 10:24

- գ. Հոբ 37:12
- դ. Սաղմոս 33:8, 66:4
- 4. երկիր կամ տարածք
 - ա. Ծննդոց 10:10, 11, 11:28,31
 - բ. հատկապես՝ Իսրայելի համար (ՅԱՀՎԵԻՑ նվեր, Նա է այդ երկրի սեփականատերը)
- 5. հող, տես՝ Հեսու 7:21
- 6. հանդերձյալ աշխարհը՝
 - ա. Ելից 15:12
 - բ. Սաղմոս 22:29, 71:20, Երեմ. 17:13, Հովնան 2:6
- 7. նոր աշխարհը՝
 - ա. Եսայի 9:1-7, 65:17, 66:22
 - բ. տես՝ ՆԿ, Հռոմ. 8:19-22, Գաղ. 6:15, 2 Պետ. 3:13, Հայտն. 21:1,5

Հիշե՛ք, որ համատեքստը, համատեքստը, համատեքստը շատ կարևոր է: Հաճախ համագորարմատները կարող են օգնել, բայց ոչ միշտ:

Գիրքը, որն ինձ օգնեց սկսել մտածել, թե ինչպես է այս աշխարհը գործածվում տարբեր համարներում, դա Բեռնարդ Նեմմի, *Գիտության և Սուրբ Գրքի շուրջ Քրիստոնեական տեսակետը* գիրքն է: Նա համոզեց ինձ, որ ջրհեղեղը եղել է տեղական բնույթի (այսինքն՝ Ծննդոց 6-9): Չգուշացե՛ք, ձեր աստվածաբանությունը անգլերեն բառերի սահմանումների վրա հիմնելուց:

❖ **«ՏԵՐԸ»** Սա Իսրայելի Աստծո ուխտի անունն է: Տե՛ս, **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ:**

❖ **«Օծյալ»** Սա եբրայերեն «Մեսիա» բառն է: Այն թարգմանվում է հունարեն որպես «Քրիստոս»: Այն խորհրդապատկերում է Սուրբ Հոգու հատուկ ներկայությունը, որպեսզի իրականացնի Աստծո ծրագրած առաջադրանքը որևէ անձի միջոցով (տես՝ 1 Թագ. 10:1,6, 16:13, 3 Թագ. 19:16, Ես. 61:1):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ
SPECIAL TOPIC: MESSIAH**

Ա. Հին Կտակարանյան կիրառությունը

Այս տերմինի հետ կապված մեկնության դժվարությունը կայանում է նրանում, որ «Մեսիա» կամ «օծյալ» բառին համագոր տարբեր կիրառություններ կան (BDB 603, KB 645): Այս տերմինը կիրառվում էր անձին հատուկ յուրով օձելիս, որպես նշան Աստծո կանչին և նախատեսված առաջնորդական գործի համար պատրաստելիս:

1. կիրառվում էր հրեա թագավորների համար (օրինակ՝ 1 Թագ. 2:10, 12:3, 24:6,10, 2 Թագ. 19:21, 23:1, Սաղմ. 89:51, 132:10,17, Ողբ. 4:20, Ամբ. 3:13, «Օծյալ Իշխան» Դան. 9:25-ում):
2. կիրառվում էր հրեա քահանաների համար (այսինքն՝ «օծյալ քահանաներ», Ելից 29:7, օրինակ՝ Ղևտ. 4:3,5,16, 6:15, 7:36, 8:12, հավանաբար Սաղմ. 84:9-10 և 133:2)
3. կիրառվում էր Նահապետների և մարգարեների համար (տես՝ Ծննդ. 20:7, 1 Մնաց. 16:22, Սաղմ. 105:15, որը վերաբերում է ուխտի հավաքական ժողովրդին. հավանաբար Ամբ. 3:13)
4. կիրառվում էր մարգարեների համար (տես՝ 3 Թագ. 19:16, հավանաբար՝ 1 Մնաց. 29:22 և Եսայի 61:1)
5. կիրառվել է Կյուրոս II-ի համար (այսինքն՝ մի հեթանոս արքայի, տես՝ Եսայի 45:1)
6. #1 և #2 միասին Սաղմոս 110 և Չաքարիա 4-ում
7. կիրառվում է Աստծո կողմից հատուկ ուղարկված՝ Դավթի սերնդի Թագավորի համար, որը բերելու է արդարության նոր դարաշրջան (այսինքն՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36)

ա. Հուդայի ցեղից (տես՝ Ծննդ. 49:10)

բ. Հեսսեի տնից (տես՝ 2 Թագ. 7)

գ. տիեզերական իշխանություն (տես՝ Սաղմ. 2, Ես. 9:6, 11:1-5, Միք. 5:1-4բ, Ամբ. 3:13)

դ. կարիքավորներին ծառայություն (տես՝ Ես. 61:1-3)

8. կիրառվել է Սաղմոսներում

Մեսիային վերաբերող շատ ակնարկներ արձանագրված են Արքայական Սաղմոսներում (այսինքն՝ Սաղմոս 2, 18, 20, 21, 45, 72, 89, 101, 110, 132, 144): Համատեքստում դրանք վերաբերում են Դավթի սերնդից օծյալ Թագավորին, բայց քանի որ կանխատեսումները երբեք չեն իրականացել Իսրայելի պատմության մեջ, շատ մեկնաբաններ պնդում են, որ դա վերաբերում է վերջին ժամանակներին:

Բ. Նոր Կտակարանյան կիրառությունը

Անձամբ ես համամիտ եմ այն մտքին, որ «օծյալը» Նագովրեցի Հիսուսն է (տես՝ Հովհ. 1:41, 4:25), քանի որ՝

1. Դանիել 2-ում ներկայացվում է հավիտենական Թագավորություն՝ չորրորդ կայսրության ընթացքում (այսինքն՝ Հռոմեականը)

2. Դան. 7:13-ում ներկայացվում է «մարդու որդու», որին տրվում է հավիտենական թագավորություն

3. Դանիել 9:24-ի փրկագործությանը վերաբերող ենթանախատեսությունները, որոնք մատնացույց են անում ընկած աշխարհի պատմության կուլմինացիային՝ վերջաբանին

4. Հիսուսը կիրառում է Դանիելի գիրքը ՆԿ-ում (տես՝ Մատթ. 24:15, Մարկ. 13:14):

Պետք է ընդունել, որ սա հազվադեպ տիտղոս է ՀԿ-ում, հավանաբար միայն Դան. 9:25-ում (նաև կիրառված է վերջին ժամանակների մեկ այլ անձի վերաբերյալ՝ Դան. 9:26-ում): Չնայած որ «Մեսիա» տիտղոսը հազվադեպ է, Դավթի սերնդից Թագավորի գաղափարը, որը իշխելու է ՅԱՀՎԵի ժողովրդի վրա, պարբերաբար կրկնվող է: Նաև պետք է որ ընդունել, որ Հիսուսը չի համապատասխանում ՀԿ-յան Մեսիայի ընդհանուր նկարագրությանը:

ա. Իսրայելում առաջնորդ չէր

բ. պաշտոնապես քահանայի կողմից օծված չէր

գ. միայն Իսրայելի համար փրկիչ չէր

դ. ոչ միայն «մարդու որդի», այլ զարմանալիորեն նաև «Աստծո Որդի» էր

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ-ՅԱՆ ՏԻՏԳՈՍՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ

SPECIAL TOPIC: OT TITLES FOR THE SPECIAL COMING ONE

Ա. Մարգարե՝ 2 Օրինաց 18:15, 18

Բ. Թագավոր

1. Հուդայի ցեղից՝ Ծննդ. 49:10, Սաղմ. 60:7, 108:8

2. Դավթի տնից՝ 2 Թագ. 7 (Հեսսեից, Եսայի 11:1)

3. այլ տեքստերից՝ 1 Թագ. 2:10, Սաղմ. 89:3-4, Եսայի 9, 11, Երեմ. 30:8-9, Եզեկ. 7:21-22, Չար. 9:9-10

Գ. Թագավոր, քահանա

1. Սաղմոս 110 (թագավոր՝ հհ. 1-3, քահանա՝ հ. 4)

2. Չարարիա 4:14 (երկու ձիթենիները, երկու օծյալները, Չորաբարելը /Դավթի ցեղը/ և Հետուն /Ահարոնի ցեղը/)

Դ. Օծյալ (տես՝ Հատուկ Թեմա. Մեսիա)

1. Աստծո օծյալ Թագավորը՝ Սաղմ. 2:2, 45:7
2. Հոգու ներկայությունը՝ Եսայի 11:2, 61:1
3. Սպասված եկողը՝ Դանիել 9:26
4. ՀԿ-յան երեք առաջնորդներն էին օծվում, որպես Աստծո կողմից կանչված և լիազորված լինելու նշան՝ թագավորները (տես՝ Դատ. 9:8, 15, 1 Թագ. 2:10, 9:16, 24:10, 2 Թագ. 19:21, 23:1, Սաղմ. 18:50), քահանաները (տես՝ Ելից 28:41, Ղևտ. 4:3, 6:22) և մարգարեները (տես՝ 3 Թագ. 19:16):

Ե. Թագավորի Որդի

1. Սաղմ. 2:7, 12
2. Իսրայելի թագավոր՝ որպես Աստծո արքայությանը խորհուրդ (1 Թագավորաց 8)

Զ. Մարդու Որդի (Դան. 7:13, տես՝ Հատուկ Թեմա. Մարդու Որդի)

1. մարդկային էությունը՝ Սաղմ. 8:4, Եզեկ. 2:1
2. աստվածային էությունը՝ Դան. 7:13

Է. Փրկության հետ կապված հատուկ տիտղոսներ

1. Չարչարվող Ծառա՝ Ես. 52:13-53:12
2. Չարչարվող Հովիվ՝ Չար. 12-14
3. Անկյունաքար՝ Սաղմ. 118, Ես. 8:14-15, 28:16 (տես՝ Հատուկ Թեմա. Անկյունաքար)
4. Հատուկ Մանուկ՝ Ես. 7:14, 9:6-7, Միքիա 5:2
5. Ընծյուղ՝ Ես. 4:2, 11:5, 53:2, Երեմ. 23:5-6, 33:15, Չար. 3:8, 6:12 (տես՝ Հատուկ Թեմա. Հիսուսը Նազարեթից)

ՆԿ-ը վերցնում է բոլոր այս ցիրուցան համարները փրկության համար Աստծո գործակալի՝ իրագործողի վերաբերյալ և դրանք հստակեցնելով, զարգացնելով վերածում որպես Աստծո կողմից Խոստացված Եկողի մասին գաղափարին (օրինակ՝ Մատթ. 16:13-20, Հովի. 11:25-27): Մեսիայի երկու գալուստները միջոցներ են, որոնցով այս իրարից տարբերվող ֆունկցիաներն ու տիտղոսները միավորվում են (տես՝ Հատուկ Թեմա. Այս և գալիք դարաշրջանները):

Ավետարաններում Մարդու Որդու՝ որպես իշխանություն ունեցողի, ի հակադրություն Չարչարվող Ծառայի միջև տարբերությունների վերաբերյալ լավ քննարկման համար տե՛ս Չորջ Ի. Լեդդի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ՝ 149-158 (George E. Ladd, *A Theology of the New Testament*):

2:3 Այս համարն ունի երկու ԸՂՁԱԿԱՆՆԵՐ:

1. եկե՛ք կուտրենք – BDB 683, KB 736, *Piel* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ Երեմ. 5:5
2. եկե՛ք թոթափենք – BDB 1020, KB 1527, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ

Մեղավոր մարդիկ (անհատներ և հավաքական խմբեր) կամենում են անկախություն իրենց Արարչից (տես՝ Ծննդոց 3):

«Շղթաները» (BDB 64) և «կապանքները» (BDB 721) վերաբերում են այն առարկաներին, որոնցով կապում էին բանտարկյալներին (այստեղ՝ ճորտեր): Նրանք (ինչպես և բոլոր անկում ապրած՝ մեղավոր մարդիկ) տեսան ՅԱՀՎԵԻ օրենքը որպես իրենց ազատությունը սահմանափակող, մինչ իրականության մեջ, Նրա օրենքը նախատեսված է մեզ ապահով, երջանիկ և պտղաբեր պահելու այս ընկած աշխարհում: Օրենքները ծնողի համար սիրո արտահայտման ուղեցույցներ են, որոնք ապահովում են առաջնորդություն և իմաստություն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 2:4-6

⁴Նա, որ երկինքներում է նստում, ծիծաղելու է, ՏԵՐԸ ծաղրելու է նրանց:

**5 Այն ժամանակ Իր բարկությամբ է խոսելու նրանց հետ
Եվ Իր սրտմտանքով խռովության է մատնելու նրանց.
6 «Ես Իմ թագավորին Իմ սուրբ լեռան՝
Սիոնի վրա դրեցի»:**

2:4-6 Սա նկարագրում է ՅԱՀՎԵԻ մտքերը և գործողությունները ազգերի իրարանցմանը: Սա անսրտայտմորֆիկ լեզու է:

1. նստում է
2. ծիծաղում է (տես՝ Սաղմ. 59:8, Առակ. 1:26)
3. ծաղրելու է
4. բարկությամբ է խոսելու

Կարո՞ղ է արդյոք ընկած, հավաքական մարդկությունը դիմադրել ՅԱՀՎԵԻ կամքին (այսինքն՝ Ծննդոց 10-11): Ո՛չ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ՄԱՐԴԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ)
SPECIAL TOPIC: GOD DESCRIBED AS HUMAN (ANTHROPOMORPHISM)**

I. Այսպիսի լեզուն (այսինքն՝ մարդուն առնչվող՝ մարդկային տերմիններով Աստծո բնութագրությունը) շատ տարածված է ՀԿ-ում (մի քանի օրինակներ)

Ա. Ֆիզիկական մարմնի մասեր

1. Աչքեր – Ծննդ. 1:4,31, 6:8, Ելից 33:17, Թվոց 14:14, 2 Օր. 11:12, Չաք. 4:10
2. Ձեռքեր – Ելից 15:17, Թվոց 11:23, 2 Օր. 2:15
3. Բազուկ – Ելից 6:6, 15:16, 2 Օր. 4:34, 5:15
4. Ականջներ – Թվոց 11:18, 1 Թագ. 8:21, 4 Թագ. 19:16, Սաղմ. 5:1, 10:17, 18:6
5. Դեմք – Ելից 33:11, Ղևտ. 20:3,5,6, Թվոց 6:25, 12:8, 2 Օր. 31:17, 32:20
6. Մատներ – Ելից 8:19, 31:18, 2 Օր. 9:10, Սաղմ. 8:3
7. Չայն – Ծննդ. 3:9,11,13, Ելից 15:26, 19:19, 2 Օր. 26:17, 27:10
8. Ոտքեր – Ելից 24:10, Եզեկ. 43:7
9. Մարդկային կառուցվածք – Ելից 24:9-11, Սաղմոս 47, Ես. 6:1, Եզեկ. 1:26
10. Տիրոջ հրեշտակը – Ծննդ. 16:7-13, 22:11-15, 31:11,13, 48:15-16, Ելից 3:4,13-21, 14:19, Դատ. 2:1, 6:22-23, 13:3-22

Բ. Ֆիզիկական գործողություններ (տե՛ս օրինակներ)

1. Ստեղծագործության մեխանիզմի վերաբերյալ խոսելը – Ծննդ. 1:3,6,9,11,14,20, 24,26
2. Քայլելը (այսինքն՝ քայլելու ձայնը) – Ծննդ. 3:8, Ղևտ. 26:12, 2 Օր. 23:14, Ամբ. 23:14
3. Նոյի տապանի դուռը փակելը – Ծննդ. 7:16
4. Չոհերը հոտոտելը – Ծննդ. 8:21, Ղևտ. 26:31, Ամովս 5:21
5. Իջնելը – Ծննդ. 11:5, 18:21, Ելից 3:8, 19:11,18,20
6. Մովսեսին թաղելը – 2 Օր. 34:6

Գ. Մարդկային զգացմունքներ (մի քանի օրինակներ)

1. Չղջում՝ ափսոսանք – Ծննդ. 6:6,7, Ելից 32:14, Դատ. 2:18, 1 Թագ. 15:29,35, Ամովս 7:3,6
2. Բարկություն – Ելից 4:14, 15:7, Թվոց 11:10, 12:9, 22:22, 25:3,4, 32:10,13,14, 2 Օր. 6:15, 7:4, 29:20
3. Խանդը՝ նախաձախնդրությունը – Ելից 20:5, 34:14, 2 Օր. 4:24, 5:9, 6:15, 32:16,21, Հեսու 24:19
4. Չզվելը՝ նողկալը – Ղևտ. 20:23, 26:30, 2 Օր. 32:19

Դ. Ընտանեկան տերմիններ (մի քանի օրինակներ)

1. Հայր

ա. Իսրայելի – Ելից 4:22, 2 Օր. 14:1, Եսայի 1:2, 63:16, 64:8, Երեմ. 31:9, Ովս. 11:1

բ. թագավորի – 2 Թագ. 7:11-16, Սաղմ. 2:7

գ. հայրական արարքների փոխաբերություններ – 2 Օր. 1:31, 8:5, 32:6-14, Սաղմ. 27:10, Առակ. 3:12, Երեմ. 3:4,22, 31:20, Ովս. 11:1-4, Մաղ. 3:17

2. Ծնող՝ Ովս. 11:1-4

3. Մայր՝ Ես. 49:15, 66:9-13 (կերակրող մոր նմանությունը)

4. Երիտասարդ հավատարիմ սիրեցյալ՝ Ովսեա 1-3

II. Այսպիսի լեզվի կիրառության պատճառները

Ա. Աստծուն անհրաժեշտ է, որ Իրեն հայտնի մարդկանց: Չկա մեկ ուրիշ բառապաշար, այլ միայն այս մեղավոր, աշխարհիկ բառապաշարը: Աստծո մասին ամենատարածված հասկացությունը որպես արական սեռի ներկայացուցիչ մարդաստվածության՝ անտրոպոմորֆիզմի օրինակներից մեկն է, քանի որ Աստված հոգի է:

Բ. Աստված վերցնում է մարդկային կյանքի ամենանշանակալի ոլորտները և դրանք կիրառում Իրեն հայտնելու ընկած՝ մեղավոր մարդկությանը (հայր, մայր, ծնող, սիրեցյալ):

Գ. Չնայած որ ժամանակ առ ժամանակ սա անհրաժեշտություն է (այսինքն՝ Ծննդ. 3:8), սակայն Աստված չի ուզում սահմանափակվել որևէ ֆիզիկական ձևի՝ կազմվածքի մեջ (տես՝ Ելից 20, 2 Օրինաց 5):

Դ. Ամենամեծ մարդաստվածության օրինակը եղավ Հիսուսի մարմնացումը: Աստված ֆիզիկական, շոշափելի մարմին առավ (տես՝ 1 Հովհ. 1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես՝ Հովհ. 1:1-18):

III. Համառոտ հետաքրքիր քննարկման համար կարդացեք Գ. Բ. Կայերդի, *Աստվածաշնչի լեզուն և Պատկերները*, գլուխ 10, «Մարդաստվածություն», (G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, chapter 10, "Anthropomorphism,") Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարանում /The International Standard Bible Encyclopaedia/, էջ՝ 152-154:

2:4 «Երկինքներում է նստում» Սա վերաբերում է Աստծո գահի վայրին, որտեղ Նա տիրում է: «Երկինքների» համար տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ (ՀԿ)

SPECIAL TOPIC: HEAVEN (OT)

Երբայերեն տերմինը (BDB 1029, KB 1559, միշտ ՀՈԳՆԱԿԻ, հայերենում թարգմանված է «երկինք», «երկնականար», «հաստատություն», «օդ») կարող է վերաբերել մի քանի բաների (այսինքն՝ սկզբնական ստեղծագործության մի շարք երկնականարների կամ մթնոլորտների)։

1. Ծննդոց 1:8-20-ում այն նկատի ունի երկրից վրա տարածված մթնոլորտը, որտեղ ամպերն են շարժվում և թռչունները՝ թռչում:

2. Այս երկնականարը (տես՝ Ծննդ. 1:6,20, Ես. 40:22, 42:5) երկրագնդից վեր, որտեղից Աստված անձրևն է ուղարկում (այսինքն՝ «երկնքի պատուհանները», տես՝ Ծննդ. 7:11, 8:2, Սաղմ. 78:23-29, Եսայի 24:18, Մաղ. 3:10 կամ «երկնքի ջրամանները», տես՝ Հոր 38:37): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐԱԳՆԴԻ ՇՐՋԱՆԱԿԸ:

3. Այս երկնականարը, որտեղ աստղերն են բնակվում և մոլորակները շարժվում: Այն կարող է վերաբերել ամբողջ ստեղծված տիեզերքին (միլիարդավոր և միլիարդավոր գալակտիկաներին): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ:

4. Այս երկնականմարից վեր Աստծո բնակատեղին է (այսինքն՝ երրորդ կամ յոթերորդ երկինքը . տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔՆԵՐԸ): Այն ամենաբարձր երկինքն է (օրինակ՝ 2 Օր. 10:14, 3 Թագ. 8:27, 30, 32, Սաղմ. 2:4, 148:4, Եսայի 66:1):

5. Աստվածաբանական շեշտադրությունը՝

ա. Աստված ամեն բանի արարիչն է:

բ. Նա է վերահսկում ստեղծագործությունը (այսինքն՝ լույսն ու խավարը, անձրևն ու երաշտը):

գ. Նա է ստեղծել և դրել գիշերվա լույսերը (արև, լուսին, աստղեր, մոլորակներ, գիսաստղեր)

դ. Երկինքները գործածվում են մարդկանց նշանների համար՝

1) երբ երկրպագել, երբ ցանել (տես՝ Ծննդ. 1:14)

2) Նոյին տրված ծիսաձանը (տես՝ Ծննդ. 9:12-17)

3) տրված կամ հետ պահված անձրևը ուխտի հնազանդության դրսևորում (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30)

4) թագավորներին հայտնություն (տես՝ Դան. 6:27)

5) Մեսիայի հայտնությունը (տես՝ Դան. 7:13-14)

6) նոր դարաշրջանի մասին հայտնությունը (տես՝ Հովել 2:30-31, Գործք 2:19-20)

7) վերջին օրերի նեղությունները (տես՝ Մարկ. 13:24-26, Ղուկ. 21:11, 25, Հայտն. 15:1)

8) «նոր երկինքը և նոր երկիրը» Աստծո և մարդկության միջև փոխհարաբերության աստվածաշնչյան նկարագրության վայրն է (այսինքն՝ Եդեմի վերդարձված Պարտեզը, տես՝ Հայտնություն 21)

ե. Կան իրականության ոլորտներ կամ տիրույթներ՝

1) երկիր

2) երկրից վեր

3) անտեսանելի՝ հրեշտակային (տես՝ Կող. 1:16)

4) Աստծո ներկայությունն ու բնակատեղին

5) դրանք բոլորն էլ կապված են և վերահսկվում են Նրա կամքով

Կարծում եմ «երկինքն ու երկիրը» խոսքը նկատի ունի այս մոլորակը՝ նկարագրված այնպես, կարծես թե մի մարդ դիտորդ նայում է վերից (այսինքն՝ գործածելով նախանվանաբանական լեզու): Աստվածաշունչը կենտրոնանում է այս մոլորակի վրա: Դրա նպատակն այն չէ, որ տա ամբողջ տիեզերքի մասին հայտնության տեղեկատվություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔՆԵՐԸ SPECIAL TOPIC: THE HEAVENS AND THE THIRD HEAVEN

ՀԿ-ում «երկինք» տերմինը սովորաբար ՀՈԳՆԱԿԻ է (այսինքն՝ *shamayim*, BDB 1029, KB 1559): Երբայերեն տերմինը նշանակում է «բարձրություն»: Աստված բնակվում է բարձրում: Այս հասկացությունը արտացոլում է Աստծո սրբությունն ու գերազանցությունը:

Ծննդ. 1:1-ում ՀՈԳՆԱԿԻՆ «երկինքները և երկիրը» դիտարկվել է որպես թե Աստված ստեղծել է (1) այս մոլորակից վեր մթնոլորտը կամ (2) ամբողջ իրականությունը նկատի ունենալով կերպ, (այսինքն՝ հոգևոր և ֆիզիկական): Այս հիմնական հասկացությունից ելնելով այլ տեքստեր մեջբերում են նկատի ունենալով երկինքների մակարդակները՝ «երկինքների երկինքը» (տես՝ Սաղմ. 68:33) կամ «երկինքը և երկինքների երկինքը» (տես՝ 2 Օր. 10:14, 3 Թագ. 8:27, Նեեմ. 9:6, Սաղմ. 148:4): Ռաբբիները ամփոփում են, որ հնարավոր է գոյություն ունեն՝

1. երկու երկինք (այսինքն՝ Ռ. Հուդա, Հագիգա 12բ)

2. երեք երկինք (Կտակ. Ղևի 2-3, Եսայու համբարձում 6-7, Միդրաշ Թեհիլիմ Սաղմ. 114:1)
3. հինգ երկինք (III Բարուքի)
4. յոթ երկինք (Ռ. Միմոնք. Լաքիշ, Եսայու համբարձումը 9:7)
5. տաս երկինք (II Ենովք 20:3բ, 22:1)

Այս բոլորը նպատակ ունեն ցույց տալու Աստծո առանձնացումը ֆիզիկական ստեղծագործությունից և / կամ Նրա գերազանցությունը: Երկինքների ամենատարածված թիվը ռաբբիական Հուդայականության մեջ յոթն է: Ա. Քոհենի *Բոդոթ մարդկանց Թարմուդդ* (էջ՝ 30) գրքում ասվում է, որ սա կապված է տիեզերական ոլորտների հետ, սակայն ես կարծում եմ, որ այն նկատի ունի յոթը որպես կատարյալ թիվ (այսինքն՝ ստեղծագործության օրերը՝ յոթ խորհրդապատկերելով Աստծո հանգստության օրը Ծննդոց 2:2-ում):

2 Կորնթ. 12:2-ում Պողոսը նշում է «երրորդ» երկինք (հունարեն *ouranos*) որպես Աստծո անձնական, փառահեղ ներկայությունը մատնանշող խոսք: Պողոսն Աստծո հետ անձնական հանդիպում էր ունեցել:

❖ **«Ծիծաղում է»** ԲԱՅԸ (BDB 965, KB 1315, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) գրականական միջոց է մատնանշելու ՅԱՀՎԵԻ գերիշխանությունը: *UBS ձեռնարկը* (էջ՝ 26) ունի մի խորաթափանց մեկնաբանություն: «Սաղմ. 1:1-ում «հեզնոդները» այն մարդիկ են, որոնք Աստծուն են ծաղրում. այստեղ՝ Աստված է ծաղրում հեթանոս իշխաններին»:

❖ **«Տերը»** Սաղմ. 1:4ա և 4բ զուգահեռներ են, ուստի այստեղ Աստվածությանը նկատի ունի ՅԱՀՎԵԻ (տես՝ Սաղմ. 2:2գ): Բառը հենց ՅԱՀՎԵՆ չէ, այլ *Ադոն* երբայերեն «սեփականատեր», «ամուսին», «տեր» տերմինը: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

2:6 ՅԱՀՎԵՆ ի հակադրություն կուռքերի, որոնք չեն կարող տեսնել, լսել, կամ գործել, Իր Թագավորին դրեց (բառացի՝ «նվիրեց», BDB 651, KB 703, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ): Իսրայելի թագավորը գործում էր որպես ՅԱՀՎԵԻ ներկայացուցիչ:

Ուշադրություն դարձրեք անձնական ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻՆ՝ «Ինձ», «Իմ» (երկու անգամ): ՅԱՀՎԵՆ անձնապես աշխարհում ներկա է և ակտիվ, և հատկապես իր ուխտի ժողովրդի հետ է:

❖ **«Իմ սուրբ լեռան՝ Սիոնի»** Այս երկուսն էլ վերաբերում են Մորիա լեռանը՝ Երուսաղեմում գտնվող մի բլուր, որի վրա կառուցված էր տաճարը: Սկզբնապես Սիոնը վերաբերում էր այն բլրին, որի վրա Հերուսացիների ամրոցն էր կառուցված (այսինքն՝ Երուսաղեմը շրջապատված է յոթ բլուրներով): Դավիթը նվաճեց այն և կառուցեց իր պալատը այս բլրի վրա: Հետագայում այն դարձավ միջոց, ըստ որի նախագծվեց ամբողջ Երուսաղեմ քաղաքը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՐԻԱ, ՍԱՂԵՄ, ՀԵԲՈՒՄ, ԵՐՈՒՍԱԿՆԵՄ, ՍԻՈՆ
SPECIAL TOPIC: MORIAH, SALEM, JEBUS, JERUSALEM, ZION**

Այս տերմինը (Մորիա, BDB 599, KB 635), շատ տարբեր կերպերով է թարգմանվել՝

1. Վուլգատտան և Մամարացիների Հնգամատյանը տալիս է «տեսիլքներ»
2. Թարգումը թարգմանում է այն որպես «երկրպագություն»
3. Մեպտուազինտան տալիս է «բարձր»
4. Փեշիտտան՝ «Ամոնացիների»
5. որոշ գիտնականներ թարգմանում են այն որպես «ցույց տրված ՅԱՀՎԵԻ մասին»
6. մյուսները՝ «ընտրյալը»
7. մինչդեռ ուրիշներն էլ՝ «հայտնվելու վայրը»

Կարծես թե «հայտնվելու վայրը» հավանական լավագույն թարգմանությունն է՝ հիմնված 2 Մնաց .3:1-ում այս տերմինի մյուս կիրառության վրա, որը նշում է, որ տաճարը կառուցվեց Մորիա

լեռան վրա, մի վայր, որտեղ Աստված հայտնվեց Դավթին: Սա կարող է կա՛մ նկատի ունենալ 2 Թագ. 24:16, կա՛մ էլ հավանաբար 1 Մնաց. 21:18-30: Այս համատեքստում Աբրահամը Իսահակին զոհ մատուցելը կա՛մ բաց է թողնված, քանի որ այն այնքան հայտնի պատմություն էր, կա՛մ էլ այն հայտնի չէր 1 Մնացորդացի հեղինակին: Նաև Մորիա լեռը կարծես թե կապ ունի Մեքիսեդեկի քաղաքի՝ Սաղեմի հետ (Ծննդ. 14:18), որը հետագայում կոչվեց Հերուս, որն էլ դարձավ Երուսաղեմ:

1. «Մորիա» լեռը կապված է Աբրահամի ժառանգ Իսահակի հետ Ծննդ. 22:2-ում, որը հետագայում դարձավ տաճարի տեղանքը (տես՝ 2 Մնաց. 3:1):
2. «Սաղեմ» (BDB 1024 II, KB 1539, տես՝ Ծննդ. 14:18, Սաղմ. 76:2, Եբր. 7:1,2)՝ Մեքիսեդեկի քանանական մի քաղաքի տեղանք:
3. Հետագայում այն դարձավ քանանացիների «Հերուս» քաղաքը (BDB 101, KB 382, «հերուսացիներ» բառից, տես՝ Ծննդ. 10:16, 15:21, Ելից 3:8, 17, Հեսու 18:16, 18, Դատ. 19:10-11), որը Դավիթը գրավեց (տես՝ 1 Մնաց. 11:4-5):
4. Այս անունը փոխվեց դարձավ «Երուսաղեմ» (BDB 436, KB 437), հավանաբար Դավթի կողմից քաղաքի գրավումից հետո: Դժվար է համոզված պատասխան տալ այստեղ, քանի որ այս անունը օգտագործվում է Հեսու 10, 12, 15-ում: «Երուսաղեմ» անունն ունի անհայտ ստուգաբանություն. հավանաբար նշանակում է «խաղաղության կալվածք» կամ «խաղաղության հիմք»:
5. Հաճախ այս մայրաքաղաքը անվանվում է «Միոն» (BDB 851, KB 816), որը այն յոթ բլուրներից մեկի անունն է, որոնց վրա կառուցված է Երուսաղեմ քաղաքը: Այս անունը հաճախ կիրառվում է Սաղմոսներում և Եսայի մարգարեության գրքում: Այն դարձավ հրեա ժողովրդին նկատի ունենալու կերպ:

Այս տերմինը նշանակությունը անհայտ է, սակայն առկա են հետևյալ տարբերակները (AB, հատոր 6, էջ՝ 1096):

ա. Եբրայերեն արմատ – «ժայթքել»

բ. Եբրայերեն արմատ – «չորանալ»

գ. Քռոեցիների արմատ – «առվակ», «վտակ», «վաղի»

դ. Արաբերեն արմատ – «բլրի գագաթ», «կատար»

ե. Եբրայերեն «վահան» բառից ենթադրական արմատ – «ամրոց»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 2:7-9

⁷ «Կհռչակեմ վճիռը. ՏԵՐԸ ինձ ասաց.

«Դու Իմ Որդին ես,

Ես այսօր քեզ ծնեցի»:

⁸ Խնդի՛ր Ինձնից, ու հեթանոսներին Քեզ ժառանգություն եմ տալու

Ու երկրի հեռավորագույն մասերը՝ Քեզ սեփականություն:

⁹ Նրանց կկտորես երկաթե գավազանով,

Կփշրես նրանց՝ որպես բրուտի աման»:

2:7-9 Խոսողը նոր Թագավորն է, այստեղ՝ կոչվում է ՅԱՀՎԵԻ «Որդին» (տես՝ Եբր. 1:2, 3:6, 5:8, 7:28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՃՈ ՈՐԴԻՆ SPECIAL TOPIC: THE SON OF GOD

Սա ՆԿ-ում Հիսուսին տրված ամենակարևոր անուններից է: Անշուշտ այն ունի աստվածաբանական նշանակություն: Այն Հիսուսին ներկայացնում է որպես «Որդին» կամ «Իմ Որդին», իսկ Աստծուն դիմում է որպես «Հայր» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՃՈ

ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ: ՆԿ-ում այն հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ, երբ Հիսուսն է հնքն իրեն անվանում «Մարդու Որդի» Դանիել 7:13-14 հատվածից, սա ևս ունի աստվածաբանական նշանակություն:

ՀԿ-յան հասկացությամբ «որդի» բառը կարող է վերաբերել չորս հատուկ խմբերի (տես՝ **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . . . ՈՐԴԻՆԵՐԸ (ՀԿ)**)՝

1. հրեշտակներին (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, տես՝ Ծննդ.6:2, Հոր 1:6, 2:1)
2. Իսրայելի Թագավորը (տես՝ 2 Թագ.7:14, Սաղմ.2:7, 89:26-27)
3. Իսրայելի հավաքական ազգին (տես՝ Ելից 4:22-23, 2 Օր.14:1, Ովս.11:1, Սաղ.2:10)
4. Իսրայելի դատավորներին (տես՝ Սաղմ.82:6)

Երկրորդ կիրառությունն է, որ կապ ունի Հիսուսի հետ: Այս կերպով «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկու արտահայտություններն էլ կապված են 2 Թագավորաց 7, Սաղմոս 2 և 89-ի հետ:

ՀԿ-ում «Աստծո որդին» երբեք չի օգտագործվել հատուկ Մեսիայի համար, բացառությամբ որպես էսկատոլոգիական՝ գալիք թագավորի համար, որպես Իսրայելի «օծված պաշտոններից» մեկը: Այնուամենայնիվ Մեռյալ Ծովի Գալարներում այս տիտղոսը Մեսիական նշանակությամբ շատ տարածված է (տես՝ հատուկ մեջբերումներ *Հիսուսի և Ավետարանների վերաբերյալ Բառարանում /Dictionary of Jesus and the Gospels/, էջ՝ 770): Նաև «Աստծո Որդի» տիտղոսը հանդիսանում է Մեսիական տիտղոս երկու հրեական միջաստվածաշնչային հայտնության աշխատություններում (տես՝ 2 Եզրաս 7:28, 13:32,37,52, 14:9 և 1 Ենովք 105:2):*

Այս խոսքի ՆԿ-յան հիմքը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփվում է մի քանի կատեգորիաներով՝

1. Նրա մշտագոյության՝ նախքան արարումը գոյություն ունենալը (տես՝ Հովհ.1:1-18)
2. Նրա բացառիկ (կուսական) ծնունդը (տես՝ Մատթ.1:23, Ղուկ.1:31-35)
3. Նրա մկրտությունը (տես՝ Մատթ.3:17, Մարկ.1:11, Ղուկ.3:22: Աստծո ձայնը երկնքից միանում է Սաղմոս 2-ի թագավորին Եսայի 53-ի չարչարվող ծառայի հետ միասին):
4. Սատանայի կողմից Նրա փորձությունը (տես՝ Մատթ.4:1-11, Մարկ.1:12,13, Ղուկ.4:1-13: Նա փորձվում է, որպեսզի կասկածի տակ առնի Իր որդի լինելու փաստը, որ գուցե այդպիսով իր նպատակը կիրականացնե՞ր մեկ այլ ճանապարհով՝ առանց խաչի):
5. Անընդունելի խոստովանողների կողմից Նրա մասին հաստատություններ՝
ա. դևերը (տես՝ Մարկ.1:23-25, Ղուկ.4:31-37,41, Մարկ.3:11-12, 5:7, տես՝ **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ [պիղծ ոգիները] ՆԿ-ում**)
բ. անհավատները (տես՝ Մատթ.27:43, Մարկ.14:61, Հովհ.19:7)
6. Իր աշակերտների կողմից հաստատությունն Իր մասին.
ա. Մատթ.14:33, 16:16
բ. Հովհ.1:34,49, 6:69, 11:27
7. Իր կողմից հաստատությունը.
ա. Մատթ.11:25-27
բ. Հովհ.10:36
8. Աստծո մասին Իր կողմից որպես Հոր՝ ընտանեկան փոխաբերության կիրառությունը.
ա. Աստծո համար «Աբբա» բառի կիրառությունը Իր կողմից
1) Մարկ.14:36
2) Հռոմ.8:15
3) Գաղ.4:6
բ. Պարբերաբար Իր կողմից օգտագործվող Հայր (*patēr*) բառը՝ նկարագրելու աստվածության հետ Իր փոխհարաբերությունը:

Որպես ամփոփում, «Աստծո Որդի» տիտղոսը աստվածաբանական մեծ նշանակություն էր ներկայացնում իրենից այն մարդկանց համար, ովքեր ՀԿ-ը և դրա խոստումներն ու կատեգորիաները լավ գիտեին, սակայն ՆԿ-ի գրողները անհանգստանում էին տեսնելով այս տիտղոսի կիրառությունը հեթանոսների մեջ, քանի որ համաձայն նրանց հեթանոսական

հավատամքի հիմքի «աստվածները» ամուսնանում էին կանանց հետ, որոնցից սերվում էին ժառանգներ՝ «հսկաներ» կամ «տիտաններ»:

2:7 «Ես այսօր քեզ ծնեցի» Ինչ որ իմաստով այս արտահայտությունը ներկայացնում է 2 Թագավորաց 7-ի աստվածային խոստումները (տես՝ Սաղմ.89:26-27), որտեղ ՅԱՀՎԵՆ փոխաբերական լեզվով խոստանում է լինել «հայր» Դավիթի արքայական սերունդներին: «Այսօր» բառը վերաբերում էր թագավորի թագադրման օրվան: Նկատել՝ Ջոն Ուոլթերի *ՀՄԱ մտածելակերպը և ՀԿ-ը*, էջ՝ 89, ծանոթագրություն 19. «այն գաղափարը, որ բազմացումը կապ ունի դերի հետ ավելին, քան նյութի, ակնհայտ է նույնիսկ սուրբգրային այնպիսի հայտարարություններում, ինչպիսիք են... (Սաղմ. 2:7), որտեղ թագավորը ծնված է իր արքայական դիրքի մեջ»:

Նաև ուշադրություն դարձրեք Գ. Բ. Քայիրդի *Աստվածաշնչի Լեզուն և պատկերները*, էջ՝ 190: Սակայն, այս Սաղմոսում այն խոսում է Մեսիայի մասին (այսինքն՝ Հիսուսի, տես՝ Մատթ.3:17, Դուկ. 3:22, Մարկ.1:11, 9:7, Գործք 13:33, Եբր.1:5, 5:5), որը խնդրո առարկա դարձավ որոշ աստվածաբանների համար հատկապես «միաստվածության» առնչությամբ և հետագայում ՆԿ-ի որդեգրության հերձվածողություն:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՆՈԹԵԻՉՄ /միաստվածություն/
SPECIAL TOPIC: MONOTHEISM**

Մարդկությունը միշտ զգացել է, որ իրականությունը ավելին է քան միայն ֆիզիկականը (այսինքն՝ իրենց վերահսկողությունից դուրս գտնվող երևույթների կողմից ազդեցություն ունենալը, ինչպես օրինակ՝ փոթորիկները, խավարումները, եղանակը, աղետները, մահը, և այլն): Մարդաբանները մեզ ասում են, որ պարզագույն հոմինոիդների գերեզմաններում գտնում են իրեր, որոնք ըստ երևույթին հաջորդ կյանքի համար են եղել դրված, որը նրանք դիտարկում էին որպես այս կյանքի երկարացում:

Առաջին գրառված մշակույթը շումերականն է (հարավային Տիգրիս, Եփրատ գետերը), որը սկիզբ է առել Ք.Ա.10000-8000թթ: Նրանք գրում էին բանաստեղծություններ, որով արտահայտում էին իրենց տեսակետը աստվածների և նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ, ճիշտ ինչպես մարդիկ՝ իրենց բոլոր թերություններով հանդերձ (այսինքն՝ ինչպես հետագայում Քանանի, Հունաստանի և Հռոմի պանթեոնները): Նախքան գրի առնվելը նրանց ավանդույթները գոյատևել էին բանավոր տեսքով:

Գոյություն ունեւ ժամանակագրական աստվածաբանական զարգացում՝

1. անիմիզմից դեպի
2. բազմաստվածություն, այդտեղից էլ՝
3. բարձրյալ աստծուն (կամ դուալիզմ)

«Միաստվածության» հասկացությունը (միայն մեկ Աստված), ոչ թե պարզապես բազմաստվածության «ամենաբարձր աստված» կամ պարսկական դուալիզմի բարի աստվածը (Չրադաշտականություն), յուրահաուկ է Իսրայելին (Աբրահամ, Ք.Ա. 2000): Միայն մեկ բացառություն կա շատ կարճ ժամանակով Եգիպտոսում (Ամենհոտեպ IV, նաև հայտնի որպես Ախենաթեն, Ք.Ա.1367-1350 կամ 1386-1361):

Այս գաղափարը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի հատվածներում:

1. «չկա ոչ որ ՅԱՀՎԵ-ի կամ Elohim-ի պես» Ելից 8:10; 9:14; 2 Օր.33:26; 3 Թագ.8:23
2. «ոչ որ բացի Նրանից»՝ 2 Օր.4:35,39, 32:39, 1 Թագ.2:2, 2 Թագ.22:32, Ես.45:21, 44:6,8, 45:6,21
3. «ՅԱՀՎԵն մեկն է»՝ 2 Օր.6:4, Հռոմ.3:30, 1 Կորն.8:4,6, 1 Տիմ.2:5, Հակ.2:19
4. «չկա Քեզ պես մեկ»՝ 2 Թագ.7:22; Երեմ.10:6
5. «միայն Դու ես Աստված»՝ Սաղմ.86:10; Ես.37:16
6. «Ինձանից առաջ Աստված չեղավ, և ինձանից հետո չի լինելու»՝ Ես.43:10

7. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա... ուրիշը չկա»՝ Ես.45:5,6,22
8. «Նա է ամեն բանի աղբյուրը»՝ Ես. 45:7 (տես՝ Ամովս 3:6)
9. «Նրանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:14,18
10. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:21
11. «Ես եմ Աստված ու Ինձ նմանը չկա»՝ Ես.46:9

Պետք է ընդունել, որ այս կենսականորեն կարևոր վարդապետությունը հայտնությամբ աստիճանաբար է տրվել: Սկզբնական սահմանումը հավանաբար հասկացվել է որպես «հենդեիզմ» կամ գործնական մոնոթեիզմ (այսինքն՝ գոյություն ունեն այլ աստվածներ, սակայն մեր համար կա միայն մեկը (տես՝ Ելից 15:11, 20:2-5, 2 Օր.3:28, 5:7, 6:4,14, 10:17, 32:12, 3 Թագ.8:23, Սաղմ.83:18, 86:8, 136:1-2):

Առաջին տեքստերը, որ սկսել են մատնանշել եզակիությունը՝ (փիլիսոփայական մոնոթեիզմ) վաղ շրջանի են (Ելից 8:10; 9:14; 2 Օր.4:35, 39; 33:26): Լիարժեք և կատարյալ սահմանումները գտնվում են Եսայի 43-46 (տես՝ 43:11; 44:6,8; 45:7,14,18,22; 46:5,9):

ՀԿ-ը արժեզրկում է ազգերի աստվածներին որպես՝

1. մարդու ձեռքի գործեր՝ 2 Օրինաց 4L28, 4 Թագ. 19:18, Սաղմ. 115:4-8, 135:15-18, Ես. 2:8, 17:8, 37:19, 40:19, 41:7,24,29, 44:10, 12, 46:6-7, Երեմ. 10:3-5, Հայտն. 9:10
2. դևեր՝ 2 Օրինաց 32:17, Սաղմ. 106:37, Ես. 8:19, 19:3գ, 1 Կորնթ. 10:20, Հայտն. 9:20
3. ունայնություն, դատարկություն՝ 2 Օրինաց 32:21, 4 Թագ. 17:15, Սաղմ. 31:6, Ես. 2:18, 41:29, Երեմ. 2:5, 10:8, 14:22, Երեմ. 2:5, 8:19
4. չաստվածներ՝ 2 Օրինաց 32:21, 2 Մնաց. 13:9, Ես. 37:19, Երեմ. 2:11, 5:7, 1 Կորնթ. 8:4-5, 10:20, Հայտն. 9:20:

ՆԿ-ը վկայակոչում է 2 Օր.6:4-ը Հռոմ.3:30; 1 Կորն.8:4,6; Եփես.4:6; 1 Տիմ.2:5 և Հակ.2:19-ում: Հիսուսը մեջբերում է այն որպես առաջին պատվիրան Մատթ.22:36-37; Մարկ.12:29-30; Ղուկ.10:27: Թե՛ ՀԿ-ը և թե՛ ՆԿ-ը հաստատում են այլ հոգևոր էակների իրողությունը (դևեր, հրեշտակներ, տես՝ Հատուկ Թեմա. Հրեշտակներ և դևեր), սակայն միայն մեկ արարիչ/փրկիչ Աստված (ՅԱՀՎԵ, Ծննդ.1:1):

Աստվածաշնչյան միաստվածությունը ՀԿ-ում բնութագրվում է՝

1. Աստված մեկ է և բացառիկ (գոյաբանությունը ենթադրվում է, ոչ թե մատնանշվում)
2. Աստված անձ է (տես՝ Ծննդ.1:26-27, 3:8)
3. Աստված բարոյական է (տես՝ Ելից 34:6, Նեեմ.9:17, Սաղմ.103:8-10)
4. Աստված մարդուն Իր պատկերով է ստեղծել (Ծննդ.1:26-27) հաղորդակցվելու համար (այսինքն՝ #2): Նա նախանձոտ Աստված է (տես՝ Ելից 20:2-3):

Նոր Կտակարանից.

1. Աստված ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն, 8:11)
2. Աստված կատարելապես և ամբողջովին հայտնեց Իրեն Հիսուսի մեջ (տես՝ Հովհ.1:1-14, Կող.1:15-19, Եբր.1:2-3)
3. Ընկած մարդկության փրկության համար Աստծո հավիտենական ծրագիրը Իր միակ Որդու քավության զոհն է (Եսայի 53, Մարկ.10:45, 2 Կորնթ. 5:21, Փիլ.2:6-11, Եբրայեցիներին, տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը):

Աստվածաբանական խնդիրն էր, թե «Արդյո՞ք Մեսիա թագավորը նախագոյ աստվածություն է», թե արարված էակ (տես՝ Առակ. 8:22-31, Հռոմ. 1:4): Հովհ. 1:1-3 պատասխանում է այս խնդրին: Շատ կարևոր է, որ այստեղ ներառեն իմ Հովհաննես 1:1-3 հատվածի մեկնության գրառումներից՝

Հովհաննես 1

Հովհ. 1:1 «Սկզբում» Սա արտացոլում է Ծննդոց 1:1-ը, ինչպես նաև կիրառվում է 1 Հովհ. 1:1-ում որպես մարմնացման վերաբերյալ հղում: Հնարավոր է, որ 1 Հովհաննեսը Ավետարանի համար

Ներածական նամակ էր: Երկուսն էլ գործ ունեն Գնոստիցիզմի հետ: Հովհ. 1:1-5-ը հիմնավորում է Հիսուս Զրիստոսի աստվածային նախագոյության՝ մինչ արարումը (տես՝ Հովհ. 1:15, 8:56-59, 16:28, 17:5, 2 Կորնթ. 8:9, Փիլ. 2:6-7, Կող. 1:17, Եբր. 1:3, 10:5-8):

ՆԿ-ը նկարագրում է որպես՝

1. մի նոր ստեղծագործություն՝ Անկումից չապականված (այսինքն՝ Ծննդ. 3:15-ը մարդկության համար իրականացված)
2. մի նոր նվաճում (Խոստացված Երկիրը)
3. մի նոր Ելից (իրականացված մարգարեություն)
4. մի նոր Մովսես (օրենքը տվող)
5. մի նոր Հետու (տես՝ Եբր. 4:8)
6. ջրի մի նոր հրաշք (տես՝ Եբրայեցիների 3-4)
7. նոր մանանա (տես՝ Հովհաննես 6)

և նմանօրինակ շատ բաներ, որոնք հիմնականում Եբրայեցիներին ուղղված թղթում են:

❖ **«Էր»** (Երեք անգամ) Սա ՆԱԿԱՏԱՐԱ ԺԱՄԱՆԱԿ է (տես՝ Հովհ. 1:1, 2, 4, 10), որը կենտրոնանում է անցյալ ժամանակում շարունակական գոյության վրա: Այս ԺԱՄԱՆԱԿԸ կիրառվում է ցույց տալու ԼՈԳՈՍԻ նախագոյությունը (տես՝ Հովհ. 8:57-58, 17:5, 24, 2 Կորնթ. 8:9, Կող. 1:17, Եբր. 10:5-7): Այն հակադրվում է ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ՝ Հովհ. 2:3, 6 և 14:

❖ **«Խոսքը»** Հունարեն *logos* տերմինը վերաբերում է պատգամին, ոչ թե պարզապես մի բառի, խառքի: Այս համատեքստում այն տիտղոս է, որը հույները կիրառում էին բնութագրելու «աշխարհի նպատակը», իսկ եբրայեցիները՝ «Իմաստության» անալոգիա: Հովհաննեսը ընտրել է այս տերմինը հաստատելու, որ Աստծո Խոսքը թե՛ անձ է, և թե՛ պատգամ: Տե՛ս Համատեքստային Հասկացություններ, Գ:

❖ **«Աստծո հետ»** «Հետ» բառը կարելի է բառադարձել «դեմ առ դեմ»: Այն նկարագրում է մտերմիկ փոխհարաբերություն: Այն նաև ցույց է տալիս մեկ աստվածային էության հասկացությունը և երեք հավիտենական դրսևորումները (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ, Հովհ. 14:26): ՆԿ-ը հաստատում է այն պարադոքսը, որ Հիսուսը առանձին է Հորից, սակայն Նա նաև մեկ է Հոր հետ:

❖ **«Բանը Աստված էր»** Այս ԲԱՅԸ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է ինչպես Սաղմ. 2:1ա-ում: ՀՈԴ չկա (որն մատնանշում է ԵՆԹԱԿԱՆ, տես՝ Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 66) *Թեոս* բառի հետ, սակայն *Թեոս* տերմինը հունարեն արտահայտության մեջ շեշտադրման նպատակով դրված է սկզբում: Այս համարը և Սաղմ. 2:18 ուժեղ հայտարարություններ են նախագոյ Լոգոսի կատարյալ աստվածության վերաբերյալ (տես՝ Հովհ. 5:18, 8:58, 10:30, 14:9, 17:11, 20:28, Հռոմ. 9:5, Եբր. 1:8, 2 Պետ. 1:1): Հիսուսը կատարյալ աստվածային է, ինչպես և կատարյալ մարդեղեն (տես՝ 1 Հովհ. 4:1-3): Նա նույնը չէ ինչ Հայր Աստվածը, սակայն Նա միևնույն էությունն ունի ինչ Հայրը:

ՆԿ-ը հաստատում է Հիսուս Նազովրեցու կատարյալ աստվածությունը, սակայն պաշտպանում է Հորից նրա անձի տարբերությունը: Միևնույն աստվածային էությունը շեշտադրվում է Հովհ. 1:1, 5:18, 10:30, 34-38, 14:9-10 և 20:28-ում, իսկ նրանց տարբերությունները շեշտադրվում են Հովհ. 1:2, 14, 18, 5:19-23, 8:28, 10:25, 29, 14:11, 12, 13, 16 համարներում:

1:2 Սա գուգահեռ է Հովհ. 1:1-ին և շեշտադրում է դարձյալ միաստվածության լույսի ներքո այն ապշեցնող ճշմարտությունը, որ Հիսուսը, որը ծնվել է մոտ մ. թ. ա. 6-5թ-ին, միշտ եղել է Հոր հետ և, հետևաբար Աստված է:

1:3 «ամեն բան Նրանով եղավ» Լոգոսը Հոր մոտ թե՛ աներևույթ և թե՛ երևելի բաների ստեղծագործության իրագործողն էր՝ գործակալը (տես՝ Հովհ. 1:10, 1 Կորնթ. 8:6, Կող. 1:16, Եբր. 1:2): Սա նման է այն դերին, որը իմաստությունը տանում է Սաղմ. 33:6 և Առակ. 8:12-23 (Եբրայեցիներում «իմաստություն» բառը ԻԳԱԿԱՆ սեռի ԳՈՅԱԿԱՆ է):

❖ **«առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ»** Մա գնոստիկների այն սուտ ուսմունքի հերքում է, որ սովորեցնում են բարձր, բարի աստծո և ավելի փոքր հոգևոր էակների միջև հրեշտակային կարգերի՝ աեոնների մասին, որոնք իբրև ձևավորել են նախագոյ մատերիան՝ նյութը:

Պետք է նշել, որ «Հայր . . . որդի» նկարագրությունը այլաբանական կերպ է, ցույց տալու անձնական փոխհարաբերություն (տես՝ 2 Օր.32:18): Մարդկային ընտանիքը հեշտ հասկացվող կերպերից է այս փոխհարաբերությունը խորհրդապատկերելու համար: Այս նույն ճշմարտությունը նաև երբայերեն «ճանաչել» հասկացության մի մասն է: Տե՛ս Հատուկ Թեմա . Ճանաչել:

2:8 Մեսիայի իշխանությունը լինելու է տիեզերական՝ համընդհանուր (տես՝ Սաղմ .67:7, Ես . 45:22, 52:10, Երեմ .16:19, Միքիա 5:4, տես՝ Հատուկ Թեմա . Հող, երկիր, երկրագունդ): Մա Աստծո աշխարհն է: Այն ստեղծվել է Աստծո և Իր պատկերով ստեղծված արարածների համար որպես հարթակ (տես՝ Ծննդ .1:26-27) փոխհարաբերվելու՝ հաղորդակցվելու համար (Ծննդ .3:8): Ադամի և Եվայի ապստամբությունը (տես՝ Ծննդոց 3) փչացրեց Աստծո պատկերը մարդկության մեջ և բացասաբար ազդեց ֆիզիկական ստեղծագործության վրա (տես՝ Հռոմ . 8:18-25): Մա այն աշխարհը չէ, որ Աստված էր նախատեսել: Սակայն, Նա չհիասթափվեց մարդկությունից: Նա հայտնեց Իրեն Իսրայելի և Իր ուղարկած Որդու միջոցով (տես՝ Ծննդ . 3:15) վերականգնելու ստեղծագործությունը իր նախնական դիրքին՝ նպատակին: Աստվածաշունչը սկսում է Աստծո և մարդկության հետ՝ Եդեմի պարտեզի միջավայրում (տես՝ Ծննդոց 1-3, Սաղմ . 1:3) և ամփոփվում է Աստծո և մարդկության հետ միասին դարձյալ պարտեզի միջավայրում (տես՝ Հայտնություն 21-22): Ամեն ինչ, որ ընկած է Ծննդոց 3 և Հայտնություն 21-22-ի միջև, Աստծո կողմից մարդու ստեղծած խառնաշփոթը կարգավորելու գործընթացն է:

❖ **«ժառանգություն . . . սեփականություն»** Այս երկու խոսքերն էլ ունեն Աստծո կողմից Իր ուխտի ժողովրդին տրվող Իր պարզևի աստվածաբանական նշանակություն: Առաջինը հասկապես հաճախ կապ ունի Ղևտացիների հետ: Երկրորդը Աբրահամի ժառանգներին տրված խոստում է (տես՝ Ծննդ . 17:8, 48:4, Ղևտ . 25:34):

2:9 «Նրանց կկոտրես երկաթե գավազանով» Եբրայերեն ԲԱՅԸ (BDB 949, KB 1270, *Qal* ԱՆ-ԿԱՏԱԲ) ցՄԴ արմատից է, սակայն LXX և Փեշիտտա տարբերակները տալիս են «իշխել» կամ «հովվել» ԴՄԴ (BDB 944): Վաղ եկեղեցին կիրառում էր LXX և հենց այդպես էլ այս արտահայտությունը կիրառվում է Հայտն . 2:27, 12:5 և 19:15-ում:

Այնուհանդերձ, Եբրայերեն պոեզիայի հաջորդ տողի հետ հանգավորմանը (այսինքն՝ «փշրել» BDB 658, KB 711, *Piel* ԱՆ-ԿԱՏԱԲ) համապատասխանում է «կոտրելը»:

❖ **«գավազան»** ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 986) կարող է նշանակել «գավազան», «մահակ» կամ «արքայական գավազան»: Վերջին տարբերակը կարծես թե լավագույնս համապատասխանում է թագավորական համատեքստին (տես՝ Սաղմ .45:6, 125:3, Թվոց 24:17, Ես .14:5, Եզեկ .19:11, 14, Չաք . 10:11): Չնայած, եթե «հովվել» բայն է ճիշտ, ապա ավելի հարմար կլինի «գավազանը՝ մահակը» (տես՝ Սաղմ .23:4, Միքիա 7:14):

❖ **«կփշրես նրանց՝ որպես բրուտի աման»** Կավե աման փշրելը ՆՄԱ-ում դատաստանի պատկերավոր խորհուրդն ուներ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 2:10-12

¹⁰Ուստի հիմա, ո՛վ թագավորներ, իմաստո՛ւն եղեք,

Երկրի դատավորնե՛ր, խրատվեցե՛ք:

¹¹Երկյուղո՛վ ծառայեք ՏԻՐՈՉԸ

Ու դողալո՛վ ուրախացեք:

¹²Որդուն համբուրեցե՛ք, որպեսզի չբարկանա ու դուք չկորչեք ճանապարհից,

Երբ Նրա բարկությունը փոքր-ինչ բորբոքվի:

Երանի՛ բոլոր նրանց, ովքեր իրենց հույսը Նրա վրա են դրել»:

2:10-12 Ուշադրություն դարձրեք այն ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ, երբ սաղմոսերգուն (այսինքն՝ Դավիթը, տես՝ Գործք 4:25) խոսում է ՅԱՀՎԵԻ մասին, զգուշացնելով այս աշխարհի իշխաններին պատրաստվել Նրա դիմավորելու (տես՝ Առակ .8:12-21):

1. իմաստուն եղեք – BDB 968, KB 1328, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. խրատվեցեք – BDB 415, KB 418, *Niphal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. ծառայեցե՛ք Տիրոջը – BDB 712, KB 773, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. դողալով ուրախացե՛ք – BDB 162, KB 189, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. հարգանքի տուրք մատուցեք Որդուն /բառացի՝ համբուրեցեք/ – BDB 676, KB 730, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2:12 «Որդին» Որոշակի կասկածներ կան այս թարգմանության հետ կապված: Եբրայերեն «որդի» բառը **בן** (BDB 119), կիրառվում է Սաղմ.2:7-ում, սակայն այստեղ **בן** (BDB 135, այսինքն՝ արամերենի «որդի» բառը, տես՝ Առակ.31:2 /երեք անգամ/) բառն է, որը եբրայերենում կարող է նշանակել «մաքուր» (BDB 141 II, տես՝ Սաղմ.24:4, 73:1, Հոբ 11:4, Առակ.14:4): NRSV և NJB տարբերակները թարգմանում են Սաղմ.2:11ա-12ա որպես «դողալով համբուրեք նրա ոտքերը»: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 164) «համբուրե՛ք Որդուն» խոսքի համար տալիս է “B” գնահատականը (որոշ չափով կասկածելի):

Որոշ գիտնականներ ենթադրում են, քանի որ Սաղմ.2:11-12 ուղղված է նրանց շրջապատող հեթանոս ազգերին, ապա գոյություն ունի դիտավորյալ անցում եբրայերենի «որդի» բառից արամերենի «որդին»: «Հնազանդության» վրա ընդհանուր շեշտադրումը հստակ է, անգամ եթե հստակ չեն լեզվաբանական մանրամասները:

❖ **«դուք կկորչեք ճանապարհից»** Հետաքրքիր է, թե արդյոք պատահական է, որ «կորչել» (BDB 1, KB 2) և «ճանապարհ» (BDB 202) բառերը օգտագործվում են Սաղմոս 1-ում: Աստվածաշնչյան հավատքը ամենօրյա փոխհարաբերություն է ՅԱՀՎԵԻ և Նրա Մեսիայի հետ: Հիսուսը անշուշտ գործածել է Սաղմոս 1 և 2-ը որպես Մատթեոս 5-7 գլուխների՝ հատկապես 7:13, 21-23, 26-27 համարների համար ուրվագիծ:

❖ **«Երանի՛ բոլոր նրանց, ովքեր իրենց հույսը Նրա վրա են դրել»** Սաղմոս 2-ի վերջին տողը կապված է Սաղմոս 1-ի առաջին տողի հետ, հավանաբար գրական տեխնիկա է, որը կոչվում է *inclusio*: Հետևաբար, Սաղմոս 1 – Սաղմոս 2 կազմում են մի գրական բաժին (տես՝ Գործք 13:33): Թալմուդն առաջարկում է Սաղմոս 1 և Սաղմոս 2-ը որպես մեկ ամբողջական սաղմոս (տես՝ Բեր.9բ-10ա): Երանելի է ճշմարիտ հավատացյալը, որը ակնածում է ՅԱՀՎԵԻՑ և հնազանդում Նրա հայտնությանը: Հավատքը և հավատարմությունը պետք է քայլեն միասին: Արդարացումը և սրբացումը չեն կարող իրարից զատ լինել:

Նկատե՛ք, որ թե՛ Սաղմ. 1:1 և թե՛ 2:12-ը շեշտադրում են մարդկային ընտրություններն ու գործողությունները: Աստվածաշնչյան հավատքը վստահության և հնազանդության կյանքի ճամփորդություն է:

ՅԱՀՎԵՆ նկարագրվում է մի քանի փոխաբերություններով՝ որպես ապաստարանի, անվտանգության և հանգստության վայր: Մենք կարող ենք վստահել, ապավինել նրան որպես մեր՝

1. Ժայռ՝ 2 Օր. 32:37, 2 Թագ. 22:2,3, Սաղմ. 18:2
2. ամրոց՝ 2 Թագ. 22:2, Սաղմ. 144:2
3. բերդ՝ Սաղմ. 18:2, 62:2, 144:2
4. ազատարար՝ 2 Թագ. 22:2, Սաղմ. 144:2
5. վահան՝ Ծննդ. 15:1, 2 Թագ. 22:3, Սաղմ. 3:3, 18:2, 144:2, Առակ. 30:5
6. փրկության եղջյուր՝ 2 Թագ. 22:26, Սաղմ. 18:2, 75:10
7. մայր թռչուն՝ Սաղմ. 17:8, 36:7 (նաև՝ 2 Օր. 32:10-11), 57:1, 63:7, 91:4:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այս սաղմոսը համարվում Մեսիական:
2. Ազգերի մասին խոսելիս արդյո՞ք սաղմոսերգուն նկատի ունի տեղի ազգերին, թե ամբողջ աշխարհի:
3. Սահմանե՞ք «Օծյալ» բառը Սաղմոս 2:2-ում:
4. «Նրա Օծյալը» և Իմ Որդին արդյո՞ք նույն անձիք են:
5. Եթե սա վերաբերում է Հիսուսին, ապա արդյո՞ք Սաղմոս 2:7-ը ակնարկում է, որ նա ստեղծվել է: